ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 1893 -Ա/2 «19» սեպտեմբերի 2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N 301-Ա/2 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածների 1-ին մասերը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի փետրվարի 24-ի՝ «Հանրակրթական ուսումնական հաստատություններում խմբակների գործունեության և ուսումնական նախագծերի իրականացման մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին» N 301-Ա/2 հրամանի հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները՝

1) 2-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2.1.-ին և 2.2.-րդ ենթակետերով.

«2.1. Կրթության պետական կառավարման լիազորված մարմնի որոշմամբ ստեղծված Խմբակները ձևավորվում են ըստ դասարանների.

2.2. «Առողջ ապրելակերպ» Խմբակը պարտադիր է նոր չափորոշչով ուսուցում իրականացնող 5-11-րդ դասարանների, «Մասնագիտական կողմնորոշում» Խմբակը՝ նոր չափորոշչով ուսուցում իրականացնող 8-11-րդ դասարանների սովորողների համար:»:

2) 6-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6.1-ին ենթակետով.

«6.1.Պարտադիր Խմբակը գրանցվում է էլեկտրոնային մատյանում և ներառվում է դասացուցակում:»:

3) 7-րդ կետում «իրենց ցանկությամբ:» բառերը փոխարինել «իրենց ցանկությամբ՝ բացառությամբ սույն կարգի 2.2.-րդ ենթակետով սահմանված՝ «Առողջ ապրելակերպ» և «Մասնագիտական կողմնորոշում» պարտադիր Խմբակների:»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

9/19/2023

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169 **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**